

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԽԹ. ՏԱՐԻ — 1935

Կը խմբագրուի եւ կը հրատարակուի ՄԻԽԻԹԱՐԻՍՏԻՆԻ ՄԻՆԵՐԱԳԵՆՆԵՐՈՆ ԿՈՂՄԵՆԷ Ի ՎԻԵՆԱՆ ԱՂԽԱՌԱՆԳՈՒԹՅԱՄԸ ազգային եւ օտար Քանապոլսի:

Որպէս զի աւելի մատչելի դառնայ Ուսումնասիրութեան օտարալեզու արեւելագէտներուն, խմբագրութիւնս շարունակաբար պիտի ներկայացնէ նաեւ կարեւոր քանասիրական յօդուածներուն համառոտ մէկ ամփոփումը, մեջագային որ եւ է լեզուաւ:

Բաժանորդագիւմ է առեւ երկրի համար 1 ֆրանկ ստերլինգ, կամ յոյսի:

Մեր հասցէն՝

REDACTION DE LA REVUE "HANDES AMSORYA," VIENNE (Autriche), VII., Mechitharistengasse 4.

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ, ի 1935 տարիէն մի մի օրինակ կը նուիրեն Պր. Պեճոս Թուրքաճեան Պետո Սէրէմեան Ընթերցարանին ի Պլովդիւ. Պր. Յսոս Մուսսեան ի Պլովդիւ. Բրիտանացի Ընթերցարանին ի Սոֆիա:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Խմբագրութեան ուղարկում)

- Ազգայեան Ա., Երկերի ժողովածու: Երեւան 1934: 8°, էջ 374: Գինն՝ 4 ռ.:
- Անանեան Վ., Դալի-Թափա. ճամբորդական տպուորութիւններ: Երեւան 1934: 8°, էջ 84: Գինն՝ 1 ռ.:
- Անանապահան հրահանգ: Երեւան 1934: 8°, էջ 32: Գինն՝ 30 կ.:
- Անիպով Ն. Կ., Ֆիզիկոսութեան խորհրդային սիստէմի մասին: Երեւան 1934: 8°, էջ 56: Գինն՝ 50 կ.:
- Արիսեան Լ., Մեր գրականութեան մի քանի հարցերի մասին: Երեւան 1934: 12°, էջ 56: Գինն՝ 30 կ.:
- Արազ տարեգիրք: Ա. տարի: Պուրէշ 1933: 8°, էջ 272: Գինն՝ 30 Փր., պատկերազարդ:

"HANDES AMSORYA"

MONATSSCHRIFT FÜR ARMENISCHE PHILOGIE

XLIX. JAHRGANG — 1935

Herausgegeben und redigiert von der MECHITHARISTEN-KONGREGATION IN WIEN unter Mitwirkung zahlreicher Armenisten.

Um unseren nichtarmenischen P. T. Abonnenten die Benützung unserer Zeitschrift zu erleichtert werden wir fortlaufend von den wichtigen philologischen Abhandlungen ein kurzes Resumé in einer europäischen Sprache geben.

Preis dieses Jahrganges £ 1.—.

Unsere Adresse:

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻ 3, 4

ՄԱՐՏ—ԱՊՐԻԼ

ԽԹ. ՏԱՐԻ 1935

ԽՐԱՏՔ ԸՆԹԵՐՐՈՒՄԵՆ (ՆՈՒԹԻՐՎԱՆ) ԹՎԱԿՈՐԻՆ

1. Շահնամէի դաղլիւրէն թարգմանութեան Զ. հատորի Յառաջարանին մէջ (էջ 6) կը գրէր Jules Mohl. «Էջմիածնի Մատենադարանին մէջ կ'երեւայ թէ պահուած են 'Իմաստութիւն Նուշիւրվանի, խորագրի տակ երկու հայերէն գրուածք. ասոնք հաւանօրէն պահուած թարգմանութիւններ են, որպիսիներ Ֆիրդուսի ունեցած է աչքի առաջ»: Մոհլի այս տողերուն ուշադիր եղած է մեր բարեկամը Ա. Սարուխան եւ կը հրաւիրէ ակնարկուած ձեռագրի վրայ բանասէրներու ուշադրութիւնը\*:

Ինչ կը թուի թէ Յ. Մոհլ նկատի ունեցած է էջմիածնի Թ. 126 ձեռագիրը եւ այն՝ Յակոբ Կարենեանի հրատարակած Յուցակէն<sup>1</sup>: Այս տեղ յուշակազիրը տարով յիշեալ ձեռագրին բովանդակութիւնը կը գրէ (էջ 8), թէ կը պարունակէ Ստեփանոս Լեհացոյ «Աստուածաբանութիւնն». բայց աստի նաեւ «նախ նորին թարգմանութիւն Առարկութեան Արիստոտելի. բ. Բանք Նուշիւրվան թագաւորին. Գ. Սոսք փիլիսոփայից» են: Յուցակազիրն «բ. բանք...» կ'երեւայ թէ հասկցուած է թարգմանուած է «deux traités en arménien, sous le titre de la Sagesse de Nouchirvan»: Թ. 126 ձեռագրին մէջ այս երկորդ հատուածին իսկական խորագիրն է «Սրատք ի բանից թագաւորին Նուշիւրվանի»: Դժբախտաբար ձեռագրիս ուսումնասիրութիւնը պիտի չարգարացնէ Մոհլի ենթադրութիւնը: Բայց եւ այնպէս հետաքրքրական է նիւթը եւ արժանի ուշադրութեան:

2. «Նուշիւրվան» թագաւորի խրատները երկու՝ Ընդարձակ եւ Համառոտ խմբագրու-

թիւններով հասած են մեղի: Ընդարձակէն ծանօթ է ինչ երկու ձեռագիր. մէկն է Վիեննայի Մխիթարեան Մատենադարանի, Թ. 791, թղ. 166բ—170բ (Ժ. 2. զար) «Սրատ պիտանի եւ օգտակար ամենայն մարդոյ» խորագրի տակ. եւ երկրորդը Վիեննայի Մխիթարեան Մատենադարանի Թ. 263, թղ. 43բ—49ա (յամէ 1628) «Պատմութիւն Նաւարուան թագաւորին» խորագրի տակ<sup>2</sup>. սկիզբն է «Կայր թագաւոր մի պարսիկ...»:

Այս Ընդարձակ խմբագրութեան ծաղկաքաղ եղած է Համառոտը, որ խորագիր կը կրէ «Սրատք ի բանից թագաւորին Նուշիւրվանի» եւ կը սկսի «Ամենայն մարդ որ զիտէ զչափս անձին իւրոյ՝ յինչն ողջոյն մատուցէք»: Ձեռագիրներ ծանօթ են՝ Երեւան, Պետ. Թանգարան Թ. 822, թղ. 208ա (1672), էջմ. Թ. 126, թղ. 173ա (Ժ. 2.), Թ. 195, թղ. 153բ (Ժ. 2.). Վիեննա, Մխիթ. Մատ. Թ. 988, թղ. 1ա—3ա (1697, սկիզբէն պակաս): Կան ձեռագիրներ նաեւ Երուսաղէմ, Ս. Յակոբեանց Մատենադարանը, որոնց համեմատ հրատարակուած է Սիոն, 1875, էջ 261—263 «Ի բանից թագաւորին Նուշիւրվանի»:

3. Այս թագաւորը, որուն անունը ձեռագիրները պէսպէս ուղղագրութեամբ կը ներկայացնեն՝ Ա. <նո> չրուան, Նաւարուան, Նուշիւրվան, Ընդարձակ խմբագրութեան մէջ կ'անուանուի Յէզլ (էջիլ, ար. Jic), այն է Արդար: Այս յորջորջմամբ ծանօթ է Սասանեան հզոր արքայի Սոսրով Ա. Կաւատի որդին, որ թագաւորեց 531—579 տարիներուն: Սոսրով ունի իւր անուան կից յորջորջանքը՝ Anōšak rawān, Anōšeh rawān, զոր Սեբիոս Է. դարուն կը տառադարձէ Անուշըռուան, արար մատենագիրները՝ Անուշըռուան, Ֆիրդուսի՝ սղմամբ՝ Նուշիւրվան<sup>3</sup>:

\* Տես վարը, էջ 176: <sup>1</sup> Մայր Յուցակ ձեռագիր մատենից գրագարանի Ս. Աթոսոյն էջմիածնի: Թիֆլիզ 1863: <sup>2</sup> Զ. Բ. Սարգիսեան, Յուցակ, Բ., էջ 832: <sup>3</sup> Անուան մասին տես իմ Եղեշէ վարդապետ եւ իւր Պատմութիւնն Հայոց Պատերազմի, Ա.: Վիեննա 1932, էջ 255—256:



527-66

«Պոսրով Անուշարեան, կը գրէ Շաիրէլ<sup>4</sup>, կը պատկանի երանեան պատմութեան ակնաւորազոյն անուններուն... անիկա կը փառաբանուի իբրեւ Արդար թագաւոր<sup>5</sup>»: Պոսրով Անուշարեան իրանեան աւանդավէպի մէջ ըմբռնուեցաւ իբրեւ գաղափարական թագաւոր. նոյնպէս երեւակայեց զինքը արարական աշխարհը:

4. Խրատներու հայերէն թարգմանութիւնը կ'ենթադրէ արաբերէն բնագիր մը: Արաբերէնն ալ իր կարգին խմբագրուած է պահլաւերէն սկզբնազրէ մը: Կայ պահլաւ գրականութեան մէջ Պոսրով Ա. ի անունով Կտակ մը<sup>6</sup>, Andarž i anōšakəxōvān Xusrov i Kavōdān, այն է Անդարձ անմահ Խոսրովու որդւոյ Կաւտայ: Կտակին մէջ կու տայ մահուան մահամերձ Պոսրով իւր խրատները ժողովրդեան: Ասոնք հայերէն «Թագաւորութեան խրատներու» հետ մերձաւոր աղերս մը չունին: Ֆիրդուսի<sup>7</sup>, Մասուդի<sup>8</sup> եւ Թա'ալիբի<sup>9</sup> յառաջ կը բերեն յանուն Պոսրովի այլ եւ այլ խրատներ, զորոնք տուած է թագաժառանգ Որմիզդ Դ. ի եւ ժողովրդեան. ասոնք տեղ տեղ նման կը հնչեն վերոյիշեալ Կտակին, նաեւ մեր խրատներուն, բայց նոյն չեն: Թէ հին աշխարհը ո՞րքան իրաւամբ վերագրած է այս եւ նման խրատներն արդարանուն Նուշիրվան Պոսրովի, չեմ ուզեր հոս մանրակրկիտ հարցաքննութեան նիւթ ընել. անդրազոյն հետազոտութիւնը կը թողում պահլաւագէտ եւ արաբագէտ մասնագէտներու:

Խրատներու հայերէն թարգմանութեան սկիզբը կայ Մուսթ մը, ուր կ'ըսուի թէ «կայր թագաւոր մի պարսիկ, անուննորա Ա. <նո> շրուան յէլլ: Եւ ունէր թագ մի ոսկի. եւ յայն թագն էր շինած Իբ թարկ: Եւ գրած էր յամէն թարկ տասն բան... լուրջ աղութ ակամբ եւ բացած զմրուխտամբ»: Այս քսաներկու անգամ տասը «բաները» կը նկատուին «խրատ

Թագաւորութեան», զորոնք թագաւորը, ամէն անգամ որ ձի պիտի նստէր թագ ի գլուխ, նախ ի լուր իւր նախարարներու կը կարգար եւ ապա կը դնէր գլուխը:

Խրատներու համադումարն էր 22 x 10 = 220: Այս թիւը հայերէն թարգմանութեան մէջ, զոնէ ինչպէս կը ներկայացնէ զայն Վիեննայի Թ. 791, ամբողջութեամբ չէ պահուած. կը պակսի հոն 28 վճիռ. հետեւեալ բաժանմամբ.

Ա. 7.	Թ. 8.	ԺԷ. 8.
Բ. 8.	Ժ. 6.	ԺԸ. 10.
Գ. 9.	ԺԱ. 9.	ԺԹ. 10.
Դ. 10.	ԺԲ. 9.	Ի. 9.
Ե. 7.	ԺԳ. 9.	ԻԱ. 7.
Զ. 9.	ԺԴ. 9.	ԻԲ. 11.
Է. 9.	ԺԵ. 9.	
Ը. 9.	ԺԶ. 10.	

Համադումարն է 192 վճիռ, փոխանակ 220ի. ուստի դուրս ինկած է 28 վճիռ. թարգմանչէ՞ն յապաւուած, թէ օրինակողներէն զանց առնուած:

5. Խրատներս միանալով համանիւթ դրուածքներու հետ, կը յիշեմ Բանք Իմաստասիրաց, Սեկունդոս, Սեքստոս, Խիկար, Ագապետոս, Եւազր, Նեղոս, կը կազմեն հայ մատենագրութեան մէջ ուրոյն գրական բաժին մը: Թէ անոնք արթնցուցած են հետաքրքրութիւն հայ ընթերցողներու մէջ, կը տեսնուի այն Ծաղկաքաղէն, որ հանուած է «ի բանից թագաւորին Նօշրովանի», զոր յիշեցինք վերազոյն: Այս Ծաղկաքաղը թէպէտ շատ տեղեր կը խոտորի Ընդարձակէն, բայց առանց տարակուսի քաղուած է անկէ: Անծանօթ խմբագիրը առանձին փոյթ տարած է Ընդարձակին ուսմկաբանութիւնները գրական լեզուի վերածել եւ անոր մութ տեղիքները լուսաբանել. կան վճիռներ, որոնք նոյնութեամբ առնուած են. կան նաեւ այնպիսիներ, որոնք անձանաչելի ըլլալու չափ փոփոխուած են: Համատու Ծաղկաքաղին մէջ կը տեսնուին վճիռներ ալ, որոնք կը պակսին Ընդարձակին: Այսպիսիները ուրի՞շ աղբիւրէ առնուած են, թէ փոփոխակներն են Ընդարձակին եւ կամ անկէ դուրս ինկած մասերն են: Թէ խմբագիրը օտար աղբիւրէ ալ վճիռներ մուծած է իւր Ծաղկաքաղին մէջ անուրանալի է. Վիեննայի Թ. 988 կ'ընծայէ ի կատարածին խումբ մը վճիռներու, որոնք յայտնապէս ուրիշ աղբիւր կ'ենթադրեն: Կը կարծեմ սակայն թէ

<sup>4</sup> Fr. Spiegel, Erānische Altertumskunde, III. Leipzig 1878, էջ 460—461:  
<sup>5</sup> Այս յորջորջանքը նաեւ Մահմետի բերանը գրուած է. Nöldeke, Tabari, 161 ծն.:  
<sup>6</sup> Ունիտ աչեի առաջ C. Salemannի հրատարակած պահլաւերէն բնագիրն եւ գերմաներէն թարգմանութիւնը, Mélanges Asiatique, 9 (1887), 242—246: Այս սուղչապետ A. Christensen ի Կոպենհագէն, որուն կը յայտնեմ շնորհակալեմ:  
<sup>7</sup> Շահնամէ, թարգմ. Mohlի, հատոր Ե.:  
<sup>8</sup> Maqoudi, Les Prairies d'Or, publiés par Barbier de Meynard, II, 204—210.  
<sup>9</sup> Histoire des Rois des Perses par Al-Tha'ālibī, ed. Zotenberg, Paris 1900, էջ 608 եւն.:

Ծաղկաքաղին ինչ ինչ վճիռները, որոնք կը պակսին այժմ Ընդարձակին մէջ, նախնարար անոր մասերն եղած ըլլան: Նկատի առնելով այս հանգամանքը իբրեւ յաւելուած կը հրատարակեմ այդ Ընդարձակին պակաս վճիռները: Ապագային կը թողում հաստատել ձեռագիրներու բաղդատութեամբ, թէ անոնցմէ որոնք իրօք Ընդարձակին մասերն եղած են:

6. Արաբերէն սկզբնազրի մը հետքերը հայերէն թարգմանութեան մէջ զգալի են: Կան բաղմաթիւ արաբերէն բառեր, որոնք նոյնութեամբ փոխ առնուած են թարգմանչէն: Թարգմանութիւնը ըստ ամենայն հաւանականութեան ի գլուխ ելած է Աուաքել Անեցւոյ եւ Ընկերներու ձեռքով, որոնք Երագահանի մը թարգմանիչն եղած են 1222ին Անի քաղաքին մէջ, արաբերէն բնագրէ: Ժամանակի համար յետնազոյն եզր պէտք է առնել 1310: Վիեննայի Թ. 791 ձեռագիրը, ուր պահուած է խրատներու հնագոյն օրինակը, Մովսէս Երզնկացւոյ կազմած Ոսկեփորիկը կը ներկայացնէ, խմբագրուած 1310էն յառաջ:

Ինչպէս Երագահանի, նոյնպէս այս Խրատներու թարգմանիչը կիրարկած է ուսմկորէն բարբառ մը. Հ. Բ. Սարգիսեան կը գրէր, թէ գրուածքս «միջնադարեան ուսմկորէնով թարգմանուած է, ուր կան պատմուածք (իմա՛՛ վճիռք) նորակերտ եւ ուշադրաւ բառերով եւ բացատրութեամբ» (Ցուցակ, էջ 832): Այս տեսակէտէ կ'արթնցնէ գրուածքս առանձին հետաքրքրութիւն: Պէտք է ըսել թէ յաջողած է թարգմանչին շատ տեղ ճարտարութեամբ հայացնել վճիռները, որոնք առածի նկարագիր ստացած են: Բայց կան մութ տեղիքներ ալ, անյաջող վճիռներ ալ:

7. Կ'ամփոփեմ այս տեղ օտար բառերն եւ ապա ուսմկորէններէն ինչ ինչ:

- Աբլահ, Ը. 2, ար. ابلا, տղէտ, պարզամիտ:
- Ազուք, ար. اوزق, պահլ. yakand, յակինթ:
- Ապրահ, Բ., պ. ابرآ, ջրմուղ, ջրանցք. համադորն է քարի բառին:
- Արազ, ԺԸ. 1, ար. عرق, օղի:
- Արզապ, ԺԶ. 7, ար. ارازاب, ցանկութիւն, տենչ:
- Դարպաս, Զ. 2, պ. դարվա'դէ. հմմտ. Աճառեան, Արմատ. Բառարան, Բ. 444:
- Յեղլ, էղել, ար. جعد, արդար, իրաւախոհ:
- Թաղբիր, քաղբիր, ար. Թէտպիր. կարգ, խորհուրդ եւն.:

- Թարկ, ար. طرقي, ճանապարհ, ուղի, անցք, համադոր ապրահի:
- Խիլաք, Թ. 5, ար. خيل (հիլէթ) նենգութիւն, խաբէութիւն, խարդախութիւն:
- Խամուր, պ. եւ ար. خام, արբշիռ:
- Խրքնալ, «յորբերոյ իրք մի խրքնաք», ԺԶ. 6, ար. خرب Խարք, արմատէն, գողնալ, կորղել:
- Հալալ, ԺԷ. 3, ար. حلال, արդար:
- Շառ ձգել, Ժ. 6, ար. شاد, կազ, կռիւ, թշնամութիւն:

- Ռամկօրէն բառերէն կը յիշեմ.
- Աղահատ, Է. 1, աղտաղտուկ, աղահանք. Համատուր կը կարգայ հողահատ:
- Անհարկ, «հետ անհարկից սէր մի դնէք», Է. 5. անկարեւոր, աւելորդ իր. հոս թերեւս լաւագոյն՝ «անպատիւ». տե՛ս հարկիք:
- Առոյժ, «ընդ առուծն մի հեշտ կատակէք», ԺԹ. 9:
- Դեկան, «ընդ դեկնով գենածին (զխառուածին) կռիւ մի առնէք». Է. 7. դեկան, դահեկան, դրամ:
- Թլախել, ԺԲ. 2, անարգել. Առձեռն Բառարան ունի քլախ առնել, արհամարել, անարգել:
- Կանգ, «երբ քո բախտն ի կանգ է». ԺԹ. 2. կանգնիմ բային արմատը. երբ բախտդ յաջող է:
- Հարկիք, հարկեւոր, ԺԷ. 5. արժէք, պատիւ, պատուաւոր:
- Ձեւել, ԺԸ. 3, երեւցնել, կերպարանել:
- Ճանաչաւոր, Բ. 6, ծանօթ շրջանէ մարդ:
- Մօտեւոր, Բ. 6. մերձաւոր շրջանէ մարդ:
- Միհետ (°), ԺԲ. 7, մէկզլո՞ւի:
- Տնտղեմ, ԺԴ. 9, լաւ խորհիլ:
- Փաքթիմ, ԻԲ. 7, գիրկընդխառնուիլ:
- Քիթ ի վեր կենամ. «ի հետ ողորդ սիրելեաց քիթ ի վեր մի կենայք». ԺԲ. 6:
- Քնիշամ, Է. 6, թախանձել, մուրալ:
- Քուսեմ, fubem, fudnu, ԺԵ. 5, Ի. 9, Է. 6:

8. Մեր հրատարակութեան համար բնագիր առնուած է Վիեննայի Մխիթարեան Մատենադարանի Թ. 791, թղ. 166բ—170բ. գրուած ԺԶ. դարուն ի ձեռն Վարդան Ղաբասուեցի երէցի = A: Համեմատութեան առնուած է առաջին երեք տողերու եւ վերջաւորութեան համար Վենետիկի Մխիթ. Մատենադարանի Թ. 263, ըստ յառաջբերութեան

Հ. Բ. Սարգիսեանի, Յուզակ, էջ 832: Ծանօթութեանց մէջ գետեղած ենք Համառօտ խմբագրութեան համապատասխան վճիռները, երբ խոտորած են անոնք բնագրէն. այլապէս միայն նոյնութիւնը պահպանուած ենք = Ե. Կից նշանակուած թուանշանները Վիեննայի Թ. 988 ձեռագրին յաջորդական հատուածաթուերը կը յարաբերեն, ըստ մեծի մասին համընթաց Սի ո ս ի օրինակին հետ (= S):

Վիեննայի Թ. 791, Թղ. 170ը Խրատներէս վերջը գետեղած է վճիռ մ'ալ յանուն «Քեղու-բաթ» թագաւորին, այն է Կաւատ արքայն, հայրը Խոսրով Ա. Անուշրուանի: Կարելոր համարեցանք հրատարակել զայն Անուշրուանի իրատներուն կից:

ԱՆՈՒՇՐՈՒԱՆ ԹԱԳԱՒՈՐԻ  
ԽՐԱՏՔ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ

Կայր թագաւոր մի պարսիկ, անուն նորա Ա <նու> շրուան յէզլ: Եւ ունէր թագ մի ոսկի. եւ յայն թագն էր շինած ԻԲ թարկ: Եւ գրած էր յամէն թարկ Ժ. բան, որ էր Խրատ թագաւորութեան: Եւ յորժամ կամենայր հեծնուլ թագաւորն, անոյր զթագն զայն եւ կարգայր առաջի իւր ի շխանացն: Եւ հրամայէր թէ հասկացէք եւ ի միտ առէք զիրատս զայս, որ է պէտք հողոյ եւ մարմնոյ: Եւ ապա զնէր ի գլուխն եւ հեծնոյր:

Եւ էր գրած լուրջ աղութ աղամբ եւ բացած զմրուխտամբ:

- Ա. Յառաջին թարկն գրած էր.
1. Զանձնահաճ մարդն յիսնէ ի զատ պահեցէք:
  2. Արժանաւորացն ի յիմ գանձէն բաժին տուք:
  3. Զանգիտելին մի փնդուէք:
  4. Ի բաներն մի՛ արտորայք:
  5. Զբանն ի ժամէ ժամ մի ձգէք:
  6. Զամէն բան թագբրով արարէք:
  7. Ի խրատէ մի՛ զքնիք եւ մի գարշիք:

Խարագիր. Խրատ պիտանի եւ օգտակար ամենայն մարդոյ A. պատմութիւն Նաւարուան թագաւորի V: Համառօտ խմբագրութիւնը՝ Խրատք ի բանից թագաւորին Նօջրօվանի BCD ի բ. Թ. Նուշրուանի S: Մուսւ. 1. եւ անուն V: — Աշրուան A Նաւարուան V էզիլ V: — 2 այն V: — 3 ամէն թարկի V: — 7 ապայ A: — 8 զմրուխտամբ A իմա՛ զմրուխտ աղամբ: Վիխւ. Ա. 1 յինէն B<sup>2</sup>: — 2 հանեցէք B<sup>2</sup>: — 3 եւ որ անքնին է՛ մի քննէք B<sup>5</sup>: — 4 արտարայք A: — Եւ յամենայն իրս ստիպուին մի արկանէք B<sup>6</sup>: — 6 Զգործ ժամուն մի անցուցանէք B<sup>7</sup>:

Բ. Յերկրորդ ապրահն գրած էր.

1. Ի բանին սկիզբն եւ ի կատարումն հայեցարուք:
2. Յամէն բան որ մտանէք, յառաջ գելն իմացէք:
3. Զամէն բան եւ զկտաւն տասն չափեցէք եւ ապա կտրեցէք:
4. Զփորձածն մի փորձէք:
5. Զփորձածն յանփորձն մի տայք:
6. Զմարդ որ չէք փորձել՝ ընդ նմա մի վարիք:
7. Զխոստումն որ ի ձեզ՝ մինչեւ ձեր անձդ մի խնայէք:
8. Սակաւ խոստացէք եւ աւելի կատարեցէք:

Գ. Յերրորդ թարկն գրած էր.

1. Անուանի եւ խոնարհութեան արուեստ ուսիք:
2. Զճշմարտութիւն ձեզ արարէք արուեստ:
3. Զկարողութեան հարկիքն գիտացիք:
4. Զհամբերող մարդն ճանաչեցէք:
5. Զայս կեանքս մի օր գիտացիք:
6. Զառողջութեան հարկիքն իմացիք:
7. Զձեր կեանքդ անգիտութեամբ մի անցուցանէք:
8. Յայլոց տրամութիւն մի խնդայք:
9. Ընդ կտրածն, ընդ գնացածն, ընդ այրածն, ընդ վայթածն մի տրամիք:

Դ. Ի չորրորդ թարկն գրած էր.

1. Ի մեծամեծաց օրոգայթն կոծեցարուք:
2. Զենի ժամն լաւ գիտացիք քան զայլ ժաման:
3. Մարդկաց ամէն իրաց համբերեցէք:
4. Ի տեղի որ համբերել պիտի, մի՛ ըջ տապիք:
5. Հետ ամէն մարդոյ հաշտ կացէք:
6. Ի բաներն օխակալ մի լինիք:

Բ. յերկու A: — 2 Յամենայն գործս յոր եւ կամիք ձեռն արկանել, զսկիզբն եւ զկատարումն նորին քննեցէք B<sup>7</sup>: — 3 Զամենայն կտաւ եւ գրան տասն անգամ... B<sup>28</sup>: — 4 Զփորձեալն մի եւս զարձակ փորձէք B<sup>9</sup>: — 5 Եւ զփորձեալն ընդ անփորձին մի փոխանակէք B<sup>10</sup>: — 6 Ընդ անփորձ մարդոյ դօտեմարտութիւն մի աննէք B<sup>11</sup>: — նմայ A:  
Գ. յերեք A: — 7 անցունէք B<sup>20</sup>: — 9 Վասն բեկելոյն եւ սրբեցելոյն եւ տուրս շնորհելոյն յետոյ մի սպաշուէք B<sup>13</sup>:

7. Ամէն մարդ թող զիւր չափն իմանայ:
8. Զոտներս քան զձեր չափն մի մեկնէք:
9. Ի պատերազմ երես մի դարձուցանէք:
10. Զայլոց կուր ձեր անձինդ մի առնուք:

Ե. Ի հինգերորդ ապրահն գրած էր.

1. Զկուրն միջակ արարէք:
2. Զբաներն համբերութեամբ արարէք:
3. Զծախն ի մտոյն վերայ արարէք. եւ անթիւ եւ անհաշիւ մի հանէք:
4. Սկիզբն նոր տնկոյն արարէք. եւ ապա զհինն խլեցէք:
5. Զերեւելի զգայարանս ձեր պատրաստ պահեցէք:
6. Յանպատեհ բերանոյն պատրաստ եւ ի զատ կացէք:
7. Ի մէջ մարդաձայնի եւ յանուանի վատանուն մի լինիք:

Զ. Ի վեցերորդ թարկն գրած էր.

1. Ի գողերոյ ընչիցն մի շահիք:
2. Յեզր թագաւորի դարպաս մի շինէք:
3. Ի ձեր բնակութեան տեղոյն մօտ հանութ մի շինէք:
4. Ի պիղծ եւ յանպատեհ թաղուց ի զատ կացէք:
5. Որք անխրատք են թող ի շխանաւորի ծառայութիւն չառնեն:
6. Անընկեր ի ճանապարհ մի երթաք:
7. Անարժանիցն մի խոնարհիք:
8. Հետ չարկամացն մի դատիք:
9. Յօտար հող ծառ մի տնկէք:

Է. Ի յեօթներորդ թարկն գրած էր.

1. Յաղահատ տեղք սերմն մի ցանէք:
2. Ի հետ անարժան մարդկաց մի նստիք:
3. Հետ ամէն ազգ մարդոյ մի փաթթիք:
4. Փոխ ի նորքսակ մարդոյ մի առնուք:
5. Հետ անհարկից սէր մի զնէք:
6. Ի քամոս մարդկաց հաւատք եւ աղուհաց մի քնքաք:

Դ. 7 զիւր չափն (թերեւս նախնարար գրուած՝ չափն = չափն) A: Հմմտ. «Ամենայն մարդ, որ գիտէ զչափս անձին իւրոյ, յինէն ողջոյն մատուցէք» B<sup>1</sup>: — 10 Զայլոց կուր ի ձեր անձնդ մի առնոյք (առնուք S) եւ մի կուրիք B<sup>30</sup>:  
Ե. 1 եւ համբերելով արարէք B<sup>31</sup>: — 3 Անհաշուարար ստ ամենայն գործս ձեռն մի արկանէք B<sup>73</sup>: — 4 տնկելոյն B<sup>32</sup> ապայ A:  
Զ. 2 Ի զրացութիւնս թագաւորի տուն մի շինէք B<sup>17</sup>: — 3 զձեր A մօտ ի A Ի դուստ տանց ձերոց խանութ մի զնէք B<sup>19</sup>: — 6 անուղեկից B<sup>22</sup>: — 9 ծառ եւ բոյս B<sup>33</sup>:  
Է. 1 Հողահատ տեղք սերմն մի ձգէք B<sup>31</sup>: — Ի նորեկուկ մարդուէ պարսս մի առնիցէք (աննէք S) B<sup>6</sup>:

7. Ընդ գեկնով գեհաճքն կուր մի առնէք:
8. Որ չամաչէ եւ չվահի՛ ի յիւրմէն ի զատ կացէք:
9. Հետ չտեսած մարդկացն լոյս սէր մի զնէք:

Ը. Ի յութերորդ թարկն գրած էր.

1. Որ ի մօրէն ցաւ եւ յիմար ծնանի, իւրենն զեղ մի առնէք:
2. Աբլահ մարդուն ու խոմարին ու հարբածին խրատ մի տաք:
3. Դուք զձեզ մեծ մի տեսնուք:
4. Ի լեզուանի կնոջէ պատրաստ կացէք:
5. Ով որ զխրատն ճանաչէ եւ սիրէ՛ այնոր տուք:
6. Զուտելն եւ զիմելն մի սիրէք:
7. Զեր հնազանդելոյն ուժ մի առնէք:
8. Յանպատեհ պատճառէ զծառայն մի ծեծէք:
9. Յայլոց հաց աչք մի ձգէք:

Թ. Ի յիններորդ թարկն գրած էր.

1. Զձեր հացն յայլոց սեղան մի զնէք:
2. Երբ որ զձեր հացն ուտէք՝ զձեր զրուցն տուք:
3. Ի տղայոց թրդբիր մի առնուք:
4. Զօտար կին եւ զպառաւ ի ձեր տունն մի թողուք:
5. Ի չար կնոջ խիլաթէ պատրաստ կացէք:
6. Զձեզ ծառայ մարմներոյդ մի առնէք:
7. Ընդ դստերաց մահ մի տրամիք:
8. Ի յօտարն մի վստահանայք զերդ ի փորձածն:

Ժ. Ի տասներորդ թարկն գրած էր.

1. Զիզերն յորձերն ի պահ մի տաք:
2. Յօտար իրքն աւելի քան զտէրն մի սրտացաւիք:
3. Յօտար մարդոյ տուն տանտրութիւն մի առնէք:

7 Առ արծաթազին ծառայս կուր եւ աղմուկ մի առնէք B<sup>23</sup>: — 8 Ով ոք յառականաց եւ ի նախատանաց ոչ երկնչի՛ ի նմանէ հեռազոյն կացէք B<sup>23</sup>:  
Ը. 2 Տղիտաց եւ դիւահարաց եւ արբեցողաց խրատ մի տայք B<sup>71</sup>: — 4 Ի յանգամ կնոջէ պատրաստ եղերուք (պատրաստեցարուք S) B<sup>72</sup>: — 8 Սակաւ փասիւ զհաւատարիմ ծառայս ի վայր մի ընկենուք B<sup>27</sup>:  
Թ. 3 Ընդ մանկունս խորհուրդ մի առնէք B<sup>25</sup>: — 4 Ի տուն B<sup>35</sup>:  
Ժ. 2 Զօտար իրքն (օտար իրաց սակս S)... B<sup>37</sup>: — 3 Յայլում տան տանտրութիւն մի առնէք B<sup>12</sup> (չունի S): — 6 Ի մէջ այր եւ կնոջ եւ եղբարց ստելութիւն մի ձգէք B<sup>36</sup>:

- 4. Ձայլը ի ձեր տունն տանուտէր մի զնէք:
- 5. Այն մարդիկըն որ զայս կեանքս ատեն եւ արհամարհեն, դուք զիւրեանքն մի ատէք եւ արհամարհէք:
- 6. Ի մէջ այր եւ կնոջ, ծառայի եւ ազատի շառ մի ձգէք:

ԺԱ. Ի մետասաներորդ թարկն գրած էր.

- 1. Առ թագաւորն պատրաստ եւ անարկու կացէք:
- 2. Թագաւորն թէպէտ խոնարհի՝ դուք մի համարձակիք:
- 3. Ի շխանաւորք երբ սակաւ սէր ցուցանեն, զինքն մեծ սիրեցէք:
- 4. Ի յոխակալ մարդկաց ի դատ կացէք:
- 5. Չամէն մարդոյ հարկիք իմացէք:
- 6. Ընդ բախտաւորքն մի նախանձիք:
- 7. Ընդ իմաստունք մի վանիք:
- 8. Որ տէր է զբշի եւ իմաստութեան քարտօղարի, զնոսա թեթեւ մի տեսնուք, այլ լաւութիւն արարէք:
- 9. Ի բանաստեղծ մարդկաց պատրաստ կացէք:

ԺԲ. Ի յերկոտասաներորդ թարկն գրած էր.

- 1. Ի սկի զմարդ մի թրահէք:
- 2. Չմեծամեծք տեսէք մեծ:
- 3. Չխաբէութիւն կտրեցէք, որ անհոգ կենաք:
- 4. Հետ ժլատ եւ ոչինչ մարդկաց մի դատիք:
- 5. Չհօր եւ զմօր հարկիքն մեծ տեսէք:
- 6. Ի ծերոց ի մօտաւորութենէն մի կտրիք:
- 7. Ի միհետէ մարդոյ մի տաք զձեզ կլանել:
- 8. Չերդունն եւ զպայմանն մի կոխէք:
- 9. Անկոչելի ի մարդոյ պատիւ մի երթայք:

ԺԳ. Ի յերեքտասաներորդ <թարկն> գրած էր.

- 1. Չամենայն աւուրս ձեր խրատիւ եւ իմաստութեամբ վարեցէք:
- 2. Թէպէտ եւ դուք չարք լինիք՝ զաղէկն սիրեցէք:

ԺԱ. 2 թէպէտ եւ B<sup>39</sup>: — 3 իշխանաւոր... ցուցանէ... B<sup>40</sup>: — 6 Ընդ բախտաւորք (—ս S) եւ ընդ տօլվաթաւորք (—ս S) մի նախանձիցիք (նախանձիք S) B<sup>41</sup>: — 8 Ո (որ) A: Որ տէր է զբշի եւ իմաստութեան, զնոսա թեթեւ (թեթեւ S) մի տեսնուք (տեսանելք S) B<sup>42</sup>: — 9 մարդկաց (մարդկանց S) B<sup>43</sup>:  
 ԺԲ. 8 զպայմանն A: — 9 Անհրաւիրակ հիւր ումեք մի լինի՞նք (լինիք S) B<sup>75</sup>:

- 3. Ի սկ եթէ աղէկ լինիք՝ զչարն մի բամբասէք:
- 4. Վատ մարդկացն յիւրեանց սուտն մի օղնէք:
- 5. Ի սիրելոյ եւ ի չարկամէ զգուժն մի վերացնէք:
- 6. Ի հետ մահու պիղծ դիր մի զնէք:
- 7. Չեզ ուսում ու խելք ուսիք:
- 8. Ի խրատէ մի զքնիք:
- 9. Վասն մարդկան քան զբարին այլ իրք մի ասէք:

ԺԴ. Ի չորեքտասաներորդ <թարկն> գրած էր.

- 1. Որ քան զբեզ աղէկ է եւ զիտէ՝ մեծ տես:
- 2. Ի սկ այլ իրաց քան զիմաստութեան խնդրողք մի լինիք:
- 3. Իմաստունքն քանի հեռի են, առ իւրեանքն մօտեսցուք:
- 4. Չանցած ժամանակ հետ մի համարիք:
- 5. Չինչ յաստընրէ չունիք, ի մարդկանէ մի քնքաք:
- 6. Չձեր անհոգութիւն ի լեզուոյ պատրաստելոյն իմացէք:
- 7. Թէ զանհոգութիւն ուղէք՝ զճամարտութեան արուեստ ուսիք:
- 8. Իրք որ ի պահ առնուք եւ ի վոխ վճարեցէք:
- 9. Խօսք որ չէ ի խելաց՝ անաղեցէք եւ ապա ասացէք:

ԺԵ. Ի հնգետասաներորդ <թարկն> գրած էր.

- 1. Խօսք որ ասելոյ չէ՝ մի ասէք:
- 2. Անպատեհ խօսից պատասխանի մի առնէք:
- 3. Չլեզուներդ ի չար ասելն մի սրէք:
- 4. Պիղծ խօսից միտ մի զնէք:
- 5. Թագաւորաց քուսելոյ մտիկ մի անէք:
- 6. Չինչ լսէք պատասխանի՝ լուռ կացէք:
- 7. Չինչ բան որ չլստէք՝ մի ասէք:
- 8. Չասելն քան զառնելն աւելի մի առնէք:
- 9. Չինչ լեզուովք պիղծ խօսիք, թող ի սրտերդ չկենայ:

ԺԶ. Ի վեչտասաներորդ <թարկն> գրած էր.

- 1. Ամենայն մարդոյ խօսք մի վստահանաք:

ԺԴ. 6 յիմացէք A:  
 ԺԵ. 1 Ամենայն ինչ որ անպատշաճ է, մի խօսիք B<sup>4</sup>: — 4—5 Պիղծ խօսից (—ս S) պիղծ պատասխանի մի տայք B<sup>50</sup>: — 6 լուր A:  
 ԺԶ. 1 Յամենայն մարդ (մարդոյ S) խօսք (խօսս S)... B<sup>51</sup>:

- 2. Չբարի խօսքն յամենայն մարդոյ ընդունեցէք:
- 3. Ոչ ճամարիտ եւ ոչ սուտ ամենեւին մի երզնուք:
- 4. Չայն կեանքն ընդ կեանս մի փոխէք:
- 5. Մարդոյ եւ ընկերի զայն կամեցէք զինչ ձեր անձինդ ուղէք:
- 6. Յորբերոյ իրք մի՛ խրքնաք:
- 7. Արդապք մի սիրէք, որ հանգիստ կենայք:
- 8. Այն յերկար ճանապարհին պաշարս ճարեցէք:
- 9. Ի կտրճութեան ժամն զձերութիւն ի միտ անէք:
- 10. Չձերութեան բանն ի կտրճութեան ժամն հոգացէք:

ԺԷ. Յեօթնետասաներորդ թարկն գրած էր.

- 1. Ի ժլատութենէ փախիք:
- 2. Յառատութենէ արուեստ ուսիք:
- 3. Չսկիզբն աստութեան ի ձեր հալալ արդեանցն արարէք:
- 4. Չմարդոյ կերպն ճանաչեցէք:
- 5. Սէր հետ հարկեւորացն դիք:
- 6. Ի ցածէն եւ յանդէտէն խնդիրք մի խնդրէք:
- 7. Հետ ամէն մարդոյ սէր եւ մօտաւորութիւն ըստ ժամանակին դիք:
- 8. Չպարտականն պիղծ բռնեցէք. բայց խիստ թոյլ մի թողուք:

ԺԸ. Յութնետասաներորդ <թարկն> գրած էր.

- 1. Չձմռան արաղն ամառն հոգացէք:
- 2. Չայս աւուր բանն ի վաղն մի ձգէք:
- 3. Բան որ եղծած չէ, զերդ զեղծած մի ձեւէք:
- 4. Չզեղն յառողջութեան ժամն խմեցէք:
- 5. Չարիւնն յիւր ժամն յանձնեցէք հանէք:
- 6. Երբ ձեր լինիք՝ կտրճութեան մի ցանկայք:
- 7. Չամենայն ինչ թաղբրով արարէք զինչ որ ենէք:
- 8. Չբանն ի բանաղէտն վստահացիք:
- 9. Ամէն իրաց շուտ մի աւտաք:
- 10. Չձեր ընդանիքն սիրեցէք:

ԺԹ. Յիննետասաներորդ <թարկն> գրած էր.

- 1. Ի հետ ողորդ սիրելեացն քիթ ի վեր մի՛ կենաք:

2 Յամենայն մարդոյ զբարի... B<sup>49</sup>: — 9 Ի տղայութեան ժամանակն (ժամն S) զձերութիւնն ի միտ անեցէք B<sup>58</sup>: — 10 եւ... ի տղայութեան ժամն... B<sup>59</sup>:  
 ԺԷ. 6 = B<sup>52</sup>: — 7 = B<sup>48</sup>: — 8 Պարտական... բայց խիստ թոյլ... B<sup>55</sup>:  
 ԺԸ. 2 Այս (յայս S) աւուր... B<sup>56</sup>: — 4 = B<sup>57</sup>:

- 2. Երբ քո բախտն ի կանգն է, զքո սիրելին յայնժամ յիշէ:
- 3. Չքո թշնամին խիստ մի արհամարհել:
- 4. Յիմաստուն թշնամոյն մի խիստ արհամարհել եւ մի երկնչել:
- 5. Չանդէտ սիրելին մեծ թշնամի գլտացիք:
- 6. Ի թշնամութեան ժամն սիրոյ տեղիք պահեցէք:
- 7. Ի սիրելութեան ժամն զթշնամութիւն յիշեցէք:
- 8. Ծուլութեան արուեստ մի ուսնիք:
- 9. Ընդ առուժն մի հեշտ կատակէք:
- 10. Չձեր սիրելին յաղքատութեան ժամն խնդրեցէք:

Ի. Ի քսաներորդ <թարկն> գրած էր.

- 1. Հետ գէշ աւուրն մի զիշանաք:
- 2. Ամէն մարդ յիւր չափ վայելեցէք:
- 3. Աստընորս խաղաղ թող չթուի ձեզ:
- 4. Չհոգեստնոյդ բաժինն ի մարմնաւորս մի մոռանաք:
- 5. Չտղայքն հնարութեամբ ուսուցէք արուեստ:
- 6. Չձեր կերպն որպէս էք, ի սիրելեաց եւ ի թշնամեաց ծածուկ պահեցէք:
- 7. Չմարդկաց խորհուրդ պահեցէք:
- 8. Չձեր խորհուրդն մարդկաց մի ասէք:
- 9. Ի տեղի որ քեւ կենայ՝ ալանջ մի զնէք:

ԻԱ. Ի քսաներորդ առաջնորդ <թարկն> գրած էր.

- 1. Չձեր խորհրդակիցն ի ժամանակի բարկութեան փորձեցէք:
- 2. Չկին եւ զորդի ի ժամանակ աղքատութեան մի ուրանաք:
- 3. Առ մեծամեծք աչք ի բաց կացէք հանապաղ:
- 4. Չամենայն իրք զհերիքն սիրեցէք:
- 5. Չհարտութիւն քան զմահ այլ դառն իմացիք:
- 6. Չանհոգութիւն ձեզ կենդանութիւն զխտացիք:
- 7. Ընկեր զայն սիրեցէք, որ յիւրմէն իրք մի չահիք:

ԺԺ. 4 Յիմաստուն թշնամոյն մի վախէք B<sup>67</sup>: — 5 = B<sup>66</sup>: — 6 = B<sup>62</sup> ժամն (ժամանակն S)... տեղ B:  
 Ի. 8 = B<sup>63</sup> խորհուրդն (S --u) մարդոյ B:  
 ԻԱ. 3<sup>o</sup> Ի մեծամեծաց երկիւղիւ կացէք B<sup>62</sup>: — 4 Ամենայն իրաց զհ. ս. B<sup>65</sup>: — 7 = B<sup>64</sup>:

ԻՖ. Ի քաաներորդ երկրորդ < Թարին > զրած էր.

1. Ի ժամանակ անհոգութեան քան ի նեղութեան այլ խիստ պատրաստ կացէք:
2. Յառատութեան ժամն հոգացէք մեծապէս զԱստուծոյ:
3. Ի տղայութեան ժամն համբերութիւն կալէք:
4. Յառատութեան ժամն զոհացիք մեծապէս զԱստուծոյ. զսղութիւն յիշեցէք:
5. Երբ առողջ կենայք՝ զհիւանդութիւն ի միտ ածէք:
6. Կին ի մօտեւորաց եւ ի ճանաչաւորաց առէք:
7. Ի մէկ տեսնուին ի հետ մարդոյ մի փաթթիք:
8. Չձեղ առ մարդիկ մի սուղ ունենայք:
9. Խիստ ժողովրդեան բեռն քարշ մի վիճիք:
10. Չձեր բեռնդ այլոց մի բառնայք:
11. Յանչաճ սիրելեացն ի դատ կացէք:

Թագաւոր մի կայր Քեղուբաթ անուն. ասաց. Չինչ վատ նորդք կայ, ի վերայ աղէկ կնոջն լինի: — Ասաց մէկ ամիրայն. Յէ՞ր էնց կասես: — Ասաց, թէ Շունն լաւ է քան զկին. զի շուն ո՞՞՞այ կու պահէ եւ կինն ոչ:

ՀԱՄԱՌՈՑ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՄՆԱՅՈՐԳՆԵՐԸ

8. Չձեղ ի մանկութեան բարի անուամբ հոչակեցէք (Ե. 7<sup>o</sup>):
14. Ի չարանուն տեղու մի բնակիք (Չ. 4<sup>o</sup>):
15. Ի հեղեղատ տեղի մի բազմիք (Է. 2<sup>o</sup>):
16. Ի գողոց ուխտադրութիւնս մի ընդունիք (ԺԳ. 4<sup>o</sup>):
20. Ի չար դրացեաց հեռաբնակ կացէք (Չ. 4<sup>o</sup>):
21. Առնթեր կալոյ հուպ մի երթայք (Դ. 9<sup>o</sup>):
26. Հրամանաւ կանանց չար մի գործէք:

ԻՖ. 4 եւ յառատութեան ժամն զոգութիւնն յիշեցէք B<sup>61</sup>: — յառատութիւն A: — 5 եւ յառողջութեան ժամն զհիւանդութիւն ի միտ ածեցէք B<sup>60</sup>: — 6 = B<sup>63</sup>: — 7 Ի մէկ տեսնուին (ի տեսն) յամենայն մարդոյ հետ մի փաթուիք (-թիք S) B<sup>63</sup>: — 9 Խանգարուած կ'իբեւայ A. քիբքիս երկու վիճի անկամար բառերու՝ միացած. Ընդ մարդոյ մի վիճիք V: — 10 բեռն V: — 11 Ի յանչաճ... կացիք: Եւ Քրիստոս մարգարիին փառք յաւիտեանս յամէն V:

41. Եւ թագաւոր ոք, թէպէտ եւ փանաքի լինի, նուաստադոյն մի տեսանիցէք (ԺԲ. 2<sup>o</sup>):
43. Եւ զսակաւ ձիրս թագաւորաց մեծագոյն զիտացիք:
46. Ոք որ առաւել զիտէ քան զձեզ, զնա աւելի պատուեցէք (ԺԴ. 1<sup>o</sup>):
54. Ամենայն իրաց եւ ամենայն մարդոյ շուտ մի հաւատայք (Հմմտ. Դ. 3, ԺԶ. 1):
68. Եւ ձեզէն զձեզ ի փորձութիւն մի արկանէք (Դ. 9<sup>o</sup>):
69. Հանապաղ այլոց ձեռք զօճն բռնեցէք:
70. Ի բարկացող արանց պատրաստ կացիք:
74. Չկերակուրս եւ զըմպելիս առանձնաբար մի ընթրիք (Ը. 6<sup>o</sup>):
76. Ընդ բարեբախտիկ արանց մի հակառակիք (ԺԱ. 6<sup>o</sup>):
- 78<sup>1</sup>. Ի մէծլիսն ի ձեր նմանոյն խէչն նստէք:
79. Ի հետ այլազգեաց յանպատեհ խօսս մի համարձակիք:
80. Ով ոք ընդ ձեզ խէթ ունի, ի նմանէ հեռագոյն կացէք:
81. Յերեսս թշնամեաց դառնութեամբ մի հայիք:
82. Յամենայն զրոյցս եւ ի բանս քաղցրաբարք եւ մեղմախօս լերուք:
83. Չօր մահուն ի միտ ածեցէք:
84. Եւ ի տանջանաց զժոխոց երկերուք:
85. Ի յամենայն բան զԱստուած յիշեցէք:
86. Անդբաղ աղօթիս արարէք:
87. Եւ զզոհութիւնն ի լեզւէ անպակաս արարէք:
88. Յողորմութենէ ունայն մի լինիք:
89. Աղքատաց եւ կարօտելոց օգնական լերուք:
90. Եւ ամենայն բարութեանց սիրողք եղերուք. զի աստ մարմնով ուրախ լինիլիք եւ ի հանդերձեալն հոգւով ցնծաւլիք: ...

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ



<sup>1</sup> Թ. 78—90 համաձայն ԲԻ. չունի S: Իբրիս վերջին խրատ ունի S. Եւ յամենայն ժամ զհանդերձեալն ի միտ ածէք. Կը պակսի Բին:

ԲԵԼԳԻՍ ԵՒ ՀՈՅԵՐԸ

Ը. ԳԼՈՒԽ

Անվերսի Մայր Եկեղեցին: Թումաս արքեպիսկոպոս Նուրիջանեանի մահն եւ քաղումն այնտեղ: Նրա թողած իրերը: Թումասի կաթողիկոսական կոնդակներն եւ բազմաթիւ լատիներէն յանձնարագիրները: Թումասի ծրագրած «Կայ-լատինական» դպրոցը: Նրա մահուան վկայագիրը:

Հրաշագործ Մակարից յետոյ (Բ. Գլուխ)՝ Բելգիան հանդատավար է դարձել մի երկրորդ հայ եպիսկոպոսի, որ նոյնպէս նշանաւոր է հանդիսացած, թէեւ տարբեր տեսակէտից: Բելգիայի հանրահռչակ նաւահանդիստ Անվէրս (կամ Անտվէրպէն) քաղաքի՝ յանուն Աստուածամօր Մայր Եկեղեցին (Eglise Cathédrale de Notre Dame) այն հրաշակերտ շէնքերից մէկն է, որ երբ եւ իցէ մարդկային հանձարը կառուցել է ի փառս Արարչին: Նրա մեծութիւնը, ճարտարապետական շքեղութիւնը, եւ առանձնապէս նրա հսկայական աշտարակը պատուաւոր տեղ են յատկացնում այս եկեղեցուն՝ արուեստի հրաշալիքների փորրաթիւ շարքում: Ահա այս փառաւոր տաճարում, այն էլ աւագ խորանի առջեւ, դասի մէջ, թաղուած է Վանանդեցի Թումաս արքեպիսկոպոս Նուրիջանեան: Ո՞վ էր սաեւ ինչո՞վ է նշանաւոր:

Հայ ժողովրդի քաղաքական եւ տնտեսական հանգամանքներն այնպէս են դասաւորուել, որ քաղաքակրթական քայլերն եւ ձեռնարկութիւնները մարմնացել եւ իրականացել են նրա հայրենիքից դուրս եւ ապա ներս մուծուել: Այսպէս է եղած յատկապէս տպագրութեան համար: Հայ տպագիրն առաջին անգամ լոյս աշխարհ է տեսել այնտեղ, ուր միջոցներ կային այս նոր արհեստից օգտուելու: Ինչպէս որ առաջին կարեւոր գաղթականութիւնը Եւրոպայում՝ հիմնուել է Վենետիկում, այդպէս էլ առաջին հայ գէրքը երևան է եկել զոթերի այդ հաղուազիւտ քաղաքում: Տպագրութեան գիւտից (1455) հազիւ 57 տարի վերջն էր, որ Վենետիկում երևաց նրա հայերէն օրինակը, 1512—1513ին: Այնուհետեւ հայ տիպն սկսում է տարօրինակ կերպով բուսնիլ Եւրոպայի այլեւայլ եւ միմիանցից հեռու վայրերում. Կ. Պոլսում (1567), Հռոմում (1579 եւ 1584), Լէմբէր-

դում (1616), Միլանում (1624), Պարիսում (1633), եւ Լիվոնոյում (1643): Ձեռներէց մի հայ վաճառական էլ մի սերմ բերել, ցանկ է իր հայրենի Նոր Զուղայում, 1640ին: Բայց այս բոյսերն ոչ մի տեղ հաստատուն արմատ չեն բռնել եւ չեն ծլել, ծաղկել: Բոլոր այդ տպագիրները խեղճ եւ անճաշակ գործեր են եղել:

Հայ տպագրութեան առաջին մաքուր, խկապէս գեղարուեստական արտադրութիւնը լոյս է տեսած Ամստերդամում 1660ին, շնորհիւ էջմիածնայ Յակոբ Դ. կաթողիկոսին: Հոլանդացի պատմագիրներն էլ խոստովանում են այդ երբ գրում են՝ «Հայաստանի պատրիարքը Յակոբ, արուեստի եւ գիտութեանց սիրահար մի մարդ, 1656ին լսելով, որ Վենետիկի եւ Նոր Զուղայի տպարանների տառերը մաշուել, անգործածելի են դարձել, իր սարկաւազ Մատթէոս Ծարեցին Հոլանդա է ուղարկել, որպէս զի նոր, լաւագոյն տառեր պատրաստել տայ»<sup>1</sup>: Այս Մատթէոս Ծարեցին էլ իր առաջին տպած գիրքը (1660), Շնորհալու «Յիսուս Որդին», անշուշտ իր պետից ստացած հրահանգի համաձայն, մեծ փափկանկատութեամբ նուիրել է Հոլանդայի իշխանին՝ «Նորընձա փոխնչիփային Վիլհալմ Օրանեայ»: Մատթէոսի մահից (1661) յետոյ Յակոբ կաթողիկոս Ամստէրդամ է ուղարկում Ոսկան վարդապետին, որ յաջող կերպով շարունակում է առաջինի գործն, եւ 1666ին երևան է հանում առաջին հայ մաքուր եւ պատկերազարդ տպագիրը, Աստուածաշունչը: Ոսկան Ամստէրդամում 15 գիրք տպելուց յետոյ ստիպուել է իր գործունէութիւնը տեղափոխել նախ Լիվոնոս եւ ապա Մարսիլիա, ուր եւ վախճանուել է 1674ին: Յակոբ կաթողիկոս՝ այս անգամ իր ձեռնասուն Թումաս Վանանդեցի վարդապետին է յանձնում տպարանական գործը: Թումաս այդ ժամանակ Գողթն գաւառի Ս. Պաշ վանքի նորոգութեան համար ժողովարարութիւն էր անում Հայաստանի այլ եւ այլ կողմերում. բայց կաթողիկոսի յանձնարարութեամբ անցնում է Եւրոպա եւ նախ դալիս է Հոռոմ, ուր բերել է տալիս իր 3 մերձաւոր ազգականներին, իր մօրեղբորորդի Մատթէոս Յովհաննիսեանին եւ իր եղբորորդիք Ղուկաս եւ Միքայել Նուրիջանեաններին: Սրանցից Մատթէոս Յով-

<sup>1</sup> Սարուխան, Հոլլանդա եւ Հայերը, Վիեննա 1926, Ազգային Մատենադարան, Թ. ՃԺԳ., էջ 64—71: